ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/107

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի տնօրեն Վ.Վարդանյանի (պետական ռեգիստրի գրանցման վկայական թիվ 282.020.02485),

քննելով «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից 24.12.2020թ. ներկայացված (24.12.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/107 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի նոյեմբերի 23-ին «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով

հրապարակվել է «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/12» ծածկագրով գնանշման հարցման հրավեր:

Հրավերով սահմանվում է, որ այն կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի, ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել համակարգում գրանցված բոլոր անձիք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մեր ընկերությունը, ունենալով նմանատիպ սարքավորումների մատակարարման հարուստ փորձառություն և ուսումնասիրելով հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրերը, ներկայացրել է հայտ, որը ամբողջությամբ բավարարում է հրավերի պահանջներին, ինչն էլ արձանագրվել է մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից (արձանագրություն N 2, առ 08.12.2020թ.):

Նույն արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը նվազագույն գնային առաջարկած մասնակցին՝ «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ին առաջարկել է շտկել հայտով ներկայացրած տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանությունները, այն է՝

1. էնդոսկոպիկ լույսի աղբյուրը պահանջվում է ներկառուցված, «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի առաջարկի մեջ գրված չէ ներկառուցված լինելը,

2. USB պորտը պահանջվում է դիմային վահանակի վրա, «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի առաջարկի մեջ հետևի վահանակի վրա է,

3. անալոգային ելքերը պահանջվում է RGB, SYNC, Y/C, A/V, «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի առաջարկի մեջ առկա է միայն RGB, Y/C:

Պարզաբանման առաջարկին ի պատասխան, «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ն ներկայացրել է փաստաթուղթ և առաջարկվող սարքավորման կատալոգ: Ներկայացված փաստաթղթում «Մեդտեխսերվիս» ՍՊ ընկերությունը պնդում է, որ.

1. էնդոսկոպիկ LED լույսի աղբյուրը համարվում է ներկառուցված

2. արտաքին կրիչի պորտը գտնվում է դիմային վահանակի վրա

3. առկա են անալոգային Y/C, AV, composite video*2, RGB և թվային DVI ելքեր

Ներկայացված պարզաբանումը բավարար հիմք է հանդիսացել գնահատող հանձնաժողովի համար, որից հետո հանձնաժողովը, 15.12.2020թ. N 3 արձանագրությամբ «Մեդտեխսերվիս» ՍՊ ընկերությանը ճանաչել է հաղթող և հրապարակել է պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը:

Բողոք քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն փաստի վրա, որ, պարզաբանմամբ «Մեդտեխսերվիս» ՍՊ ընկերությունը ևս մեկ անգամ հաստատել է, որ առաջարկվող սարքավորումը չի համապատասխանում պահանջվող սարքավորման տեխնիկական բնութագրերին: Մասնավորապես,

1. LED լույսի աղբյուրը, ինչպես պարզ երևում է հենց մասնակցի կողմից ուղարկված կատալոգից, ներկառուցված չէ: Այն վիդեոպրոցեսսորային համակարգից առանձին է, կարող է գործածվել առանձին, առանց վիդեոպրոցեսսորի, ունի սեփական մոդելն ու մակնիշը (ինչը ի սկզբանե նշված էր հայտով ներկայացված հավելված 1.1-ում), հետևաբար այն չի կարող համարվել ներկառուցված: Ներկառուցված կարող է համարվել այն լույսի աղբյուրը, որը վիդեոպրոցեսսորի հետ մեկ սարք է կազմում, ինչն այս դեպքում ուղիղ հակառակն է (տես՝ կատալոգի համապատասխան էջը):

2. պարզաբանման հարցման 2-րդ կետին ի պատասխան, մասնակիցը հավաստել է, որ արտաքին կրիչի պորտը գտնվում է դիմային վահանակի վրա: Այստեղ, խնդրում եմ, ուշադրություն դարձնել, որ հարցումը եղել է ոչ թե արտաքին կրիչի, այլ USB պորտի մասին: Ինչպես կարող ենք տեսնել մասնակցի կողմից ներկայացված կատալոգի վիդեոպրոցեսսորի նկարի վրա, դիմային մակերեսին գտնվում է արտաքին SD կրիչի պորտը, որը, սակայն ոչ մի պարագայում նույնը չէ, ինչ USB պորտը:

3. մասնակցին խնդրվել է պարզաբանել, արդյոք առաջարկվող սարքը համալրված է RGB, SYNC, Y/C, A/V անալոգային ելքերով, պատասխանում նշված է, որ առկա են անալոգային Y/C, AV, composite video*2, RGB և թվային DVI ելքեր: Այստեղ էլ մասնակիցը դիտավորյալ կամ պատահաբար բաց է թողել SYNC ելքին վերաբերող մասը, ինչի մասին տվյալներ նրա ներկայացրաշ կատալոգում նույնպես չկա: Այսինքն, SYNC ելք սարքը չունի:

Նշված հարցերից բացի, կան մի քանի այլ տեխնիկական բնութագրիչներ, որոնք, մեր ընկերության ուսումնասիրության արդյունքում, չեն համապատասխանում պահանջվողներին:

Սակայն, քանի որ գնահատող հանձնաժողովը հարցում է արել միայն այս 3 բնութագրիչների վերաբերյալ, բողոքում անդրադառնում ենք հենց դրանց»:

Այնուհետև Ընկերության կողմից ներկայացվել է բողոքի շտկում, հետևյալ բովանդակությամբ.

«Ինչ վերաբերում է իրավական և փաստական հիմքերին.

Բողոքում ներկայացրել ենք հետևյալ փաստաթղթերը՝

1. ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/12 գնանշման հարցման հրավերի գնահատող հանձնաժողովի արձանագրությունները

2. «Մեդտեխսերվիս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված պարզաբանումն ու կատալոգը

Նշված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում մեր ընկերությունը պնդում է, որ «Մեդտեխսերվիս» ՍՊ ընկերությունը, ըստ էության, չի շտկել անհամապատասխանությունները (մանրամասն նկարագրությունը՝ բողոքի առարկա հատվածում) և հետևաբար հայտը բավարար գնահատվել չի կարող և, ըստ ՀՀ կառավարության 526-Ն որոշման 42-րդ կետի հայտը պիտի գնահատվի անբավարար և մերժվի, իսկ նույն որոշման 48-րդ կետի 2-րդ մասի՝ գնահատող հանձնաժողովը պիտի փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնի հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ստորև՝ վերանշյալ կետերի մեջբերումները.

41. Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

48. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել Պատվիրատուին չեղյալ համարել գնահատող հանձնաժողովի 15.12.2020թ. թիվ 3 արձանագրությունը, գնահատել «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի հայտը ոչ բավարար և չշտկված, և ըստ ՀՀ կառավարության 526-Ն որոշման 48-րդ կետի 2-րդ մասի՝ փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին, այսինքն՝ «Մարգ ֆարմացիա» ՍՊ ընկերությանը:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.12.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված թիվ 2-243 գրությամբ հայտնել է, որ «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի միջև 23.12.2020թ. կնքվել է «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/12» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր և գրությանը կից ներկայացրել է թիվ «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/12» պայմանագրի պատճենը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.12.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/107 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2020/107 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել նաև «Մարգ Ֆարմացիա» և «Մեդտեխսերվիս» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.12.2020թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ն, իսկ 2-րդ տեղ՝ «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցին՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, հաղթող մասնակից ճանաչելու և «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 16.12.2020թ. տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, համաձայն որի՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5. «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի միջև 23.12.2020թ. կնքվել է «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/12» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր:

6. «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել 24.12.2020թ.:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի 24.12.2020թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի թիվ 2-243 գրությամբ ներկայացված 23.12.2020թ. կնքված թիվ «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/12» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 10-րդ հոդվածի համաձայն՝

1.***Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին*** ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2.***Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:***

3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: ***Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:***

(…)

5. ***Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:*** Մինչև

անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առոչինչ է:

(…)

<u>Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:</u>

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Այսպես, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել նաև «Մարգ Ֆարմացիա» և «Մեդտեխսերվիս» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.12.2020թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ն, իսկ 2-րդ տեղ՝ «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցին՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, հաղթող մասնակից ճանաչելու և «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 16.12.2020թ. տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, համաձայն որի՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

<u>«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի միջև 23.12.2020թ. կնքվել է «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/12» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր:</u>

«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ***«Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել 24.12.2020թ.:***

Այսպիսով՝ հարկ եմ համարում արձանագրել, որ «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ***բողոք է ներկայացվել Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջի խախտմամբ, այն է՝ 23.12.2020թ. Պատվիրատուի կողմից «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի հետ թիվ «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/12» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր կնքելուց հետո,*** ուստի հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ գտնում եմ, որ «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից 24.12.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**